


ԴՐՅԵՆԱՏ Ա. Բ. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՆ

ՃԱՆՃԵՐԻ ԿՅԱՆՔԸ
ՅԵՎ
ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ



ԹԵՏՅԱՆ

1 9 3 8

20 JUL 2010

ԴԱՑԵՆՑ Ա. Բ. ԱԼԵՔՍՈՆՅԱՆ

614
Ա.29

ՃԱՆՃԵՐԻ ԿՅԱՆՔԸ
ՅԵՎ
ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ



ՏՀ-ԴՕՁՁՁ

ԹԵՏՐԱԿ

1 9500

01.02.2013

5369



60607-67

Ինչպես հայտնի յե՛ վարակի տարածման
գործում ճանձերի դերը փոքր չե, դրա հա-
մար ել ճանձերն եպիզեմիոլոգիական տե-
սակետից վտանգավոր միջատներ են: Ե-
պիզեմիոլոգիան մեզ սովորեցնում ե, վոր
մի շարք վարակիչ հիվանդությունների՝
սիրիախտի, քնական ծաղկի, դիֆտերիա-
յի, կարմիր քամու, տուբերկուլյոզի, քոսի
և մանավանդ վորովայնատիֆի, դիղենտե-
րիայի, մանկական լուծերի տարածման
պատճառների շարքում ճանձերն զգալի
տեղ են գրավում, այսինքն այդ հիվան-
դությունների տարածման ու զարգացման
պատճառներից (ճանապարհներից) մեկը
հանդիսանում են նրանք: Առանձնապես
հատկանշական ե ճանձերի դերն ամեն տե-

սակի միկրոբների փոխանցման գործում, հատկապես այնպիսի հիվանդությունների միկրոբների, ինչպիսիք են՝ խողերան, գիշենտերիան, վորովայնատիֆը, պարատիֆերը և մանկական լուծերը։ Ճանձերն այդ միկրոբները փոխանցելով մարդկանց և սննդամթերքների վրա, տեղատեղ առաջացնում են վարակիչ հիվանդություններ։ Բացի դրանից, ճանձերը զանազան թարախային միկրոբներով վարակում են աչքերը և մարմնի բաց վերքերը։

Հայտնի յեւ, վոր ճանձերը թուչում են ամենուր, նստում են ամեն տեղ և դրա համար ել նրանց թաթիկների, կնճիթի և թների վրա միշտ ել կարելի յէ գտնել անհամար քանակությամբ միկրոբներ—հաճախ մի քանի միլիոն (5-6 միլիոն) բակտերիաներ մի ճանձի վրա։ Ճանձի մարմինը, հատկապես թաթիկները, ծածկված են բարակ մազիկներով, վորոնց չնորհիվ միկրոբները հեշտությամբ են պահպում նրանց վրա։

Ճանձերը մի քանի տեսակի յեն լինում ենիւակի ճանձ, տնային ճանձ, կապույտ

ճանձ, կանաչ լեշաճանձ, գայլ մսաճանձ, աշնանային խայթող ճանձ (ժիգալկա) և այլն։

Սենյակի ճանձը (եղն) ամբողջ կյանքի ընթացքում ձու յեւ դնում 4 անգամ, յուրաքանչյուր անգամ 120-150 ձու։ Ձու զնելու տեղ հանդիսանում ե ձիւր աղբը։ Ճանձը ձու յեւ դնում նաև արտաքնոցներում (մարդկային կղանք), թոշունների կղանքում, կենդանիների դիակներում, մնացորդների և տականքների մեջ (գլխավորապես խոհանոցային), լունավոր վերքերում, խորսի մեջ և այլն։ 8-12 ժամից հետո (ամենաշատը 3 որում) ճանձի ձվիկից առաջանում ե թթվուր, վորը 9—12 որից (ամենաշատը 21 որից) հետո գտնուած ե հարսնյակ, վորից գուրս ե գալիս, այսինքն արդեն թուչում ե հասուն ճանձը։ Հարկ ե հիշել, վոր նայած շրջապատի ջերմաստիճանին՝ դանդաղում ե (յերկարում) ճանձի զարգացման ամբողջ ցիկլը (ինչքան տաք ե, այնքան ջուտ ե վրա հասուն ցիկլի առանձին շրջանների՝ ձվիկի թրթուրի և հարսնյակի զարգացումը)։

Հստ պրոֆ. Յե. Ն. Պավլովսկու հաշվումնե-

բի՝ ճանճը մեկ տժովաց ընթացքում կարող է
տալ մի քանի միլիարդ սերունդ, իսկ ըստ
Հովարդի՝ բարենպատ պայմաններում մինչև
5,598,720,000,000:

Ճանճերի գեմ պայքարելու համար ան-
հրաժեշտ է ճանոթ լինել ճանճերի բիոլոգիա-
լին. ճանճերի բիոլոգիան մեզ սովորեցնում է,
վոր նրանց թրթուրները, գուրս գալով ձվիկ-
ներից աղբի (և այլ տականքների) մակերեսին,
դնում են դեպի խորքը, վորտեղ (աղբի ներ-
առում) ջերմաստիճանը ճամեմատաբար բարձր
է, և այդ նովաստում են նրանց զարդացմանը.
միայն թրթուրային շրջանի վերջում թըր-
թուրները թողնում են աղբը և նույնիսկ
յերբեմն անցնում ուղղակի հողի մեջ: Տնա-
յին ճանճերի մեծությունը ճանում ե՝ հգե-
րինը մինչև 8 միլիմետր, արտներինը՝ 5, 8
միլիմետր: Ճանճը կարող է թուշել 2-3 կիլո-
մետր տարածություն. իսկ դեպի վեր՝ 3-4
հարկանի տան բարձրությամբ: Այդ ճանճերը
թռչում են ցերեկը:

Տնային ճանճն ունի բաց—մոխրագույն
մարմին՝ մինչև 8 միլիմետր յերկարությամբ
ու հակառակ սենյակի ճանճի, թուչում և գիշեր-

ները: Կապույտ ճանճն առաջին յերկուսից
ավելի մեծ է, ձվիկները դնում ե մսի մեջ
և ավելի մեծ քանակությամբ (մինչև 550
հատ): Նա մուգ կապտավուն գույն ունի:
Քորչ մսաճանճերը, բացի գույնից, նախորդ-
ներից տարբերվում են նաև նրանով, վոր
ձվիկները չեն դնում, այլ ուղղակի թրթուր-
ներ են ծնում (մինչև 20 հազար, Աշոնա-
ցին խայթող ճանճը (ժիգալկան), վորը սո-
վորաբար լերեում և ոգոսառ և սեպտեմբեր
ամիսներին, շատերը շփոթում են սենյակի
ճանճի հետ: Խայթող ճանճն առանձին տե-
սակի ճանճ է, բնորոշ են նրա բերանի մոտ
գտնված ծակող, խայթող ապարատը: Զար-
գանում ե նա նեխվող խոտում, հարդում,
խոնավ տերեներում: Կանաչ լեշաճանճերն
իրենց ձվիկները, բացի կղանքից, դնում են
նաև ուղղակի լեշի վրա:

Վերեռում մենք ճանոթացանք, թե ինչպես
ե վարակը փոխանցվում զուտ պասսիվ ճա-
նապարհով: Պետք են նշել, վոր կծող ճանճերը
(որինակ՝ աշնանային խայթող ճանճը ժի-
գալկան), վորոնք սնվում են գլխավորագես-
մարդու և կենդանիների արյունով, վարակը

տարածում են նաև իրենց հատուկ կնճիթով՝
խայթելու միջոցով։ Ճանձերը սնվելով նաև
ամեն տեսակի արտաթորանքներով, որինակ՝
տիֆով և խուերայով հիվանդների կղանքով,
թոքախտավորների խորիով, կուլ են տալիս
համապատասխան միկրոբներ, վորոնք յեր-
քեմն յերկար պահպանվում են փորոտիքում,
դրա համար ել անտարբեր չպետք ել լինել
գեղի ճանձերի արտաթորանքը, հատկապես
յեթե հաշվի առնենք, վոր նրանց գեղեկա-
ցիան (արտաթորումը) որվա մեջ լինում ե
մինչև 50 անգամ։ Հետաքրքրական ե այն
համապատասխանքը, վոր պարատիքերի և վորո-
վայնատիփի միկրոբները յերկար ժամանակ
կարող են կենդան մնալ ճանձի ստամոքս-
դիքային ապարատում։

Այս ե ճանձերի համառոտ բիոլոգիան։

Ի՞նչպես պայքարել նրանց գեմ։ Պարզ ե,
վոր ճանձերի գեմ պայքարելու միջոցառում-
ները ուսցիունալ կազմակերպելու համար հար-
կավոր ե հիմնավորել այն հենց իրենց՝ ճան-
ձերի բիոլոգիայով։

Առաջին հերթին պետք ե ուժեղացնել ընդ-
հանուր սանիտարական հսկողությունն այն

ուղղությամբ, վոր սիստեմատիկորեն անց-
կացվեն այնպիսի միջոցառումներ, վորոնք
ապահովում են ճանձերի ոչխների (ձվիկ-
ների, թրթուրների) վոչնչացումը, ոչախներ,
վորոնեղ վարակվում և բազմանում են ճան-
ձերը։ Բնակավայրերի մաքրության և առնա-
սարակ միջավայրը մաքրություն պահելու պայ-
մաններում ճանձերն ապրել չեն կարող։ Դրա
համար հարկավոր ե մարդկային և կենդա-
նային ծագում ունեցող ըոլոր կղանքները
(առաջին հերթին ձիու պղը) իր ժամանա-
կին (այն ե 7-10 որից վոչ ուշ) գուրս տա-
նել բնակավայրի գծից 2-3 կիլոմետր հեռու
բնակավայրի ծագրամասից։ Ճանձերի գեմ
պայքարելու հիմնական միջոցն ե այդ Յեթե
վորեն պատճառով հնարավոր չե սիստեմա-
տիկորեն կատարել այդ, ապա պարզ ե, վոր
պետք ե մաքսիմալ չափով վոչնչացնել ճան-
ձերին, չթողնել, վոր նրանք վարակեն սնըն-
դամթերքները և մարդկանց։

Յեթե ճանձերի բազմանալու գլխավոր տե-
ղը կենդանիների աղըն ե, ապա անհրաժեշտ
ե առանձին ուշադրություն դարձնել նրա վրա։
Աղըն չպետք ե վոչնչացնել, վորովհետև նա

պարաբռանքութեա: Ճանճերի դեմ պայքարեա-
լու լավ միջոց ե աղբը պահելու տեղի ուս-
ցիոնալ շինվածքը, այսինքն՝ աղբը պետք ե
հավաքել ցեմենտապատճած մակերեսի վրա,
այդ մակերեսի յեզրերն ազատ պիտի մնան
աղբից և շուրջն ունենան 10-12 մ. խորու-
թյան առվակներ: Ճանճերի թրթուրները,
նախքան հարսնյակ գառնալը, դուրս գալով
աղբի տակից (հիշենք ճանճի բիոլոգիան),
ընկնում են առվակը և վոչնչանում: Այս մի-
ջոցառումը հեշտ ե իրականացնել խորհութե-
սություններում և խոշոր կոլտնտեսություն-
ներում:

Լավ միջոց ե նաև աղբի լավ տոփանումը
(տրամբովկա), վորի չնորհիվ աղբակույտ
ներսում ջերմությունը հասնում է մինչև
65-70 աստիճանի: (Այդպիսի ջերմությունը
վոչնչացնում է թրթուրներին): Այս միջոցը
նպատակահարմար չե գոմազըի նկատմամբ,
վորովհետեւ կովի և մյուս յեղջուրավոր ա-
նասունների աղբի մեջ ջերմությունը 40 աս-
տիճանից բարձր չի լինում, հետեապիս և
նրանց մեջ ճանճի թրթուրները չեն վոչն-
չանում: Խոշոր յեղջուրավոր անասունների

աղբի տոփանումը մենք գտնում ենք ավե-
լորդ և աննպատակահարմար: Այդ ճնարա-
վորությունները չինելու դեպքում անհրա-
ժեշտ ե աղբը փոել բարակ շերտով և պար-
բերաբար շրջել գրանից ճանճերի թրթուր-
ները վոչնչանում են (այսպիսի պայմաննե-
րում ճանճերը չեն կարող տարածվել):

Անկախ վերոհիշված միջոցառումներից, ճան-
ճերի դեմ պայքարելու համար անհրաժեշտ ե
գոմերը, ախոռներն ու մսուրները, վորքան
կարելի յե, մաքուր պահել Գոմաղըն ամեն
որ դուրս տանել գոմից (ախոռից), հատակը,
վորն անպայման պետք ե թեք լինի, մաք-
բել որպական մի քանի անգամ, այլ կերպ,
գոմը (ախոռը) հակառանիտարական գրու-
թյան մեջ պահելու դեպքում, ճանճերը զար-
գանում են հենց գոմում (ախոռում):

Ճանճերից պաշտպանվելու նպատակով ան-
հրաժեշտ ե՝ բնակարանների, ճաշաբանների,
տունանձնապես խոհանոցների, հիվանդանոց-
ների, մանկական և այլ հիմնարկների լու-
սամուտները ցանցալատել մետաղյա ցան-
ցով, կամ մառլայով: միաժամանակ նպա-
տակահարմար ե գործածել ճանճառնիշներ:

պիտք և սարքել այնպիսի բռնիւ վորտեղ
ձանձը կարողանա՞ն ներս մտնել, բայց դուրս
դալ չկարողանա: Նման ձանձարանիչները սու
վորաբար ապակյա և թափանցիկ, պատրաս-
տի ձեռվ վաճառվում են շուկաներում:

Բայց կարելի յի գործադրել նաև ինքնա-
գործ ձանձարանիչներ: Վերցնում են մի բա-
ժակ, կամ թափանցիկ պատերով բանկա, վորի
մեջ, մոտավորապես մինչև կեսը, լցնում են
զբավչանյութ (սապնալուծույթ, կաթ, ջուր,
հաց) անոթը ծածկում են սովորական թղթով,
վորի կենարոնում ճկույթի հաստությամբ
անցը են թողնում, թղթի ներքեւ հարթու-
թյանը քսում են մեզր, շաքարանյութ, մու-
րաբա կամ մի ուրիշ վորես քաղցր նյութ:
Նման ձանձարանիչների մեջ ձանձերը հեղտու-
թյամբ են մտնում:

Հասուն ձանձերի գեմ պայքարելու համար
լավ ե նաև կաչող թուղթը (ձանձասպան),
վորը հեշտ ե պատրաստվում և թանդ ել չե:

Ձանձերի գեմ լավ միջոցներ են լվածաղկից
սուացվող նյութերը, վորոնք կոչվում են
ֆլիցիդ պիրիտառմի փոշի: Այս նյութերը նոր
միջոցներ են և մեր Միության սահմաննե-

րում առաջարկված են յեղել վերջին տարի-
ների ընթացքում:

Յերեանի Սանրակինստիտուտում կատարած
մեր ուսումնասիրությունները ցույց են տա-
լիս, վոր ֆլիցիդի և պիրիտառմի փուշու գոր-
ծադրությունները տարբեր են: Ֆլիցիդը ձանձերի
գեմ գործ ե ածվում հետեյալ ձեռվ՝ բնակարա-
նի (սենյակի) բոլոր լուսամուտները, ոդանցք-
ները, դոները, առնասարակ բոլոր խոշոր անց-
քերը փակում են, ծածկում, սենյակից
դուրս տանում բոլոր սննդամթերքները, բույ-
սերը, հեռացնում կենդանիներին (կատու,
շուն, թռչուն, ձօւկ): Յեթե կա վենահիլատոր,
նույնպիս փակում են: Ֆլիցիդը կարող ե
ճրդեն առաջ բերել, այդ իսկ պատճառով ֆլի-
ցիդ պահել կամ գործածել չի թույլատրվում
այն սենյակներում, վորտեղ կրակ կա (լամպ,
գանազան պրիմուսներ, թոներ, վառարան և
այլն): Պարզ ե, վոր չի կարելի լուցկի գոր-
ծածել:

Ֆլիցիդը հասուկ գործիքի (առւլվերիպա-
տորի) միջոցով փոշիացվում ե սենյակում:
Սենյակի ամեն մի խորանարդ մետրի համար
վերցնում են մինչև 5—8 գրամ ֆլիցիդ: Յեթե

սենյակի անցքերը, ճեղքվածքները շատ են, անհրաժեշտ ե վերցնել 8 գրամ: Ֆլիցիդի փոշիացումից հետո սենյակում մառախուզ և ստացվում, այբ վիճակում, այսինքն փակպայմաններում սենյակը պահում են $\frac{1}{2}$ — 1 ժամ, վորից հետո սենյակն ողափոխելու համար բաց են անում բոլոր լուսամուտները և դըները: Միաժամանակ հավաքում են բոլոր սատկած ձանձերն ու այրում: Այլեն անհրաժեշտ ե, վորովհետև ձանձերի մի մասը կարող ե միայն ուշաթափված լինել և հետո նորից ուշքի գալ (վերակենդանանալ): Փոշիացում կատարող մարդիկ պետք ե պաշտպանված լինեն ֆլիցիդից՝ մառախով ծածկելով բերանն ու քիթը: Սենյակում բնակվողները կարող են ներս մտնել միայն սենյակը ողափոխելուց 1 — 2 ժամ հետո ֆլիցիդի հոտնամունը բնակարանում մնում է միայն 5 — 6 ժամ:

Գիրիտրումի փոշին դորձ և ածվում այլ կերպ, հատուկ տպարատի միջոցով (փոշիացնող ապարատ) պիրիտրումի փոշին փոշիացվում ե սենյակում, ամեն մեկ խորանարդ մետրին վերցնելով 3 գրամից մինչև 4 գրամ:

Փոշիացումն անհրաժեշտ ե կատարել հավասար կերպով և սենյակի բարձր մասերում: Պահանջվող մնացած պայմանները հիմնականում նույնն են, ինչ վոր ֆլիցիդի գործածություն ժամանակ:

Վորպես հեղուկ թույն առաջարկվում է գործածիկ ֆորմալինը՝ վերցնելով 15 մաս ֆորմալին, 65 մաս ջուր և 20 մաս կաթ (կարելի յն և առանց կաթի). այդ խառնուրդը լցնում են ափսեների մեջ. նպատակահարմար և ափսեյի կենարոնում դնել հացի մի կտոր, իսկ ափսեյի լեզվերում, վորպես գրավչանյութ, շաքարավագ ցանել: Սալիցիլային նատրիումի 3 տոկոսային կամ ֆտորային նատրիումի 1 տոկոսային լուծույթը մահաբեր միջոցներ են ձանձերի համար և բոլորովին անվտանգ՝ մեղ համար:


Վորպես թույն, մկնդեղի լուծույթը (մկնդեղովոտ թուղթ) ուժեղ ներգործող միջոց ե, այդ նպատակի համար վերցնում են մկնդեղային նատրիումի 1 տոկոսային լուծույթ շաքարի հետ, կամ 5,0 սպիտակ մկնդեղ, 20,0 ածխաթթվային նյութ և լուծում մեկ լիտր յեռացող ջրում: Այդ լուծույթի 10 խորա-

Նարդ սանտիմետրը մեկ լիտր ջրի մեջ՝ ճանա-
 ճերի համար ուժեղ թույն է, այդ լուծույթով
 ծծեցնում են թուղթը և աղա չորացնում:
 Մենք բոլորովին խորհուրդ չենք տալիս մկըն-
 դեղով պատրաստած այդ թուղթը գործածել
 սննդի ձեռնարկություններում և մանկական
 հիմարկներում, ինչպիսիք են՝ խոհանոցը, ճա-
 շարանը, մանկամասուրը և այլն: Այդ հողի վրա
 կարող են թունավորումներ լինել: Արտաքնոց-
 ներում (առաջին հերթին բակի արտաքնոց-
 ներում) և զանազան թափուկներում, վորոնք
 այս կամ այն պատճառով հնարավոր չե սիս-
 տեմատիկորեն գուրս տանել տվյալ բնակա-
 վալորից, ճանձերի թթվուրները վոչչացնելու
 համար կարելի յե առաջարկել մի շաբք քի-
 միական նյութեր: Նախ լայնորեն պետք ե ոգ-
 տիկ քլորակրով: Քլորակիրը շաղ են տալիս
 աղբի մակերեսին, արտաքնոցներում. զրա-
 համար գործ ե ածվում քլորակիրի 10 կամ 20
 տոկոսային լուծույթ, այսինքն մեկ կամ յեր-
 կու կիլո քլորակիրը խառնում են մեկ դուռ
 ջրի հետ: Քլորակիրի ինչպես նաև մյուս քի-
 միական նյութերի գործադրումը պետք ե լի-
 նի վոչ ուշ քան ամեն մի տասնորյակում 5—3

անդամ՝ զարնան և աշնան ամիսներին, իսկ
 ամռանը՝ ավելի հաճախ (որը մեկ անգամ):
 Այդպես ե պահանջում ճանձի բիոլոգիան:
 Լավ ե ոդնում ալրված, բայց չհանգցրած
 սովորական կիրը այդ կրի 10 և 20-տոկոսա-
 նոց լուծույթը, վորը բժշկական պրակտիկա-
 յում կոչվում ե կրակաթ, ընդունված միջոց ե:
 Կրակաթը պատրաստվում ե քլորակիրի ձեռք:
 Դրա համար մի դույլ ջրին վերցնում են մեկ
 և կես կիլո չոր և ծածկած տեղում պահված
 (այդպես և պահվում նաև քլորակիրը) չհանգ-
 ցրած կիրը: Կրակաթը, այսինքն արդեն հանգ-
 ցրած կիրն անհրաժեշտ ե գործադրել հենց
 նույն որը, այլ կերպ նա կկորցնի իր գեղին-
 ֆեկցիոն հատկությունները:

Ճանձերի գեմ լավ միջոց ե նաև չմաքրած
 կարբույան թթվուտը, ձյութը, կուպրը, նավթը
 և այլն:

Վորպես ամենից ապահով և աղբի պարար-
 տացնող հատկությունները չփշացնող միջոց,
 կարելի յե գործադրել նաև ծծմբաթթվալին
 յերկաթը (մեկ դույլ ջրին մոտավորապես
 մեկ կիլո ծծմբաթթվալին երկաթ), ըստ վորում
 յերեք մաս աղբին մերժվում ե մի մաս տվյալ



լուծույթից: Սրանք են ճանձի դեմ փիղիկաւան և քիմիական գլխավոր միջառումները:

Պետք է հիշել, վոր հասունացած ճանձերի դեմ պայքարելը կիսամիջոց և ճանձերի դեմ պայքարելու իրական և հիմնական միջոցն ի թույլ չտալ ճանձերին առաջանալ ու բազմանալ, այսինքն պայքարի շեշտը դնել վոչ թե արդեն գոյացած և հասուն ճանձերի վոչընչացման գործի վրա, այլ գլխավոր ուշադրությունը գարձնել ճանձերի ձվիկների և թլրթուրների վոչնչացման վրա. մեր ճեռնարկումները պետք ե կենտրոնացնել ճանձերի զարգացման միջավայրերի (ձիռ աղբի, բուրր տեսակի որդանական աղբերի, արտաքնոցների, աղբի արկղների և այլ բաների վրա). պետք ե գիտակցել, վոր զանազան տեսակի աղբը, զանազան տեսակի որդանական նյութերի մնացորդները բնակելի վայրերից (քաղաքներից, գյուղներից) հեռացնելով և տանիով դեպի մեր գյուղատնտեսական սոցիալիստական դաշտերը՝ մենք դրանով միաժամանակ լուծում ենք մի քանի խնդիրներ.

1. Ճանձերի և նրանց հետ կապված վարա-

կիչ հիվանդությունների դեմ բնակելի վայրերում պայքարելու խնդիրը:

2. Դաշտերն անհրաժեշտ պարարտանյութով – աղբով պարարտացնելու, վորի հետեւ վանքով և բարձր բերք ստանալու խնդիրը:

Ուրեմն այսպիսով միանգամից լուծում ե յերկու խնդիր՝ սանիտարական և տնահասական:

Վերեսում ասածներից պարզվեց, վոր ճանձերը տարածում են զանազան վարակիչ հիվանդություններ, և առաջին հերթին՝ սուր վարակիչ աղիքային հիվանդություններ. այդ պատճառով պետք է լավ հիշել վոր ամեն տեսակի սննդամթերքներ՝ միս, յուղ, պանիր, կաթ, հաց, կանֆետ, մրգեղին և այլն, վոչ մի գեղղում չի կարելի բաց թողնել:

Ճանձն այդ սննդամթերքները վարակում ե զանազան միկրոբներով, և թեպետ մենք հասարակ աչքով չենք տեսնում միկրոբներին, սակայն ճանձը սննդամթերքների վրա յեւխանցում հազարավոր միկրոբներ, կեղաստում ե նրանց և դրանով վարակում մեզ:

Բոլոր տեսակի սննդամթերքներն առանց բացառության պետք ե պաշտպանված լինեն ճանձերից: Հնայած գիտության տված անվի-

Ճելի ապացույցներին և այն բանին, վոր ճանածերը պատկանում են վնասատու միջատների շարքին, մի շարք պրակտիկ աշխատողներ դեռ շարունակում են թերագնահատել ճանածերի վնասակար դերը: Այդ ուղղությամբ անհրաժեշտ եռուժեղացնել մասսայական — բացցատրական աշխատանքները, լայնորեն ոպտը վել տեղական մամուլից և ռազիոնից, անցկացնելով զրույցներ գլխավորապես այն մասին, վոր ճանածը շատ սերտ կերպով շփում են ինչպես սարգու բնակարանի, այնպես ել նրա սննդամթերքների ու կենցաղային անհրաժեշտ իրերի հետ, բերելով իրեն հետ միկրոբներ, այսինքն հիվանդություններ:

Մեզ բոլորիս քաջ հայտնի յե, վոր ճանածերի դարձացման ամենաբարձր իւսենսիվությունը լինում է հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին: Բայց մենք հաճախ մոռանում ենք, վոր ճանածը ձմեռում է զանազան շենքերում:

Ձմեռը ճանածերը կարող են գտնվել ակտիվ և վոչ ակտիվ վիճակում: Մնալով ակտիվ վիճակում՝ ճանածերը կարող են ձմեռել նույնիսկ սնվել և զարգանալ: Բայց հաճախ ճանածերը

ձմեռում են վոչ ակտիվ վիճակում, այսինքն մոռում են կենդան, միայն չեն սնվում և չեն բազմանում. այդպիսի ճանածերը ձմեռում են չտաքացվող շենքերում (ցախատների, նկուղների, արտաքնոցների անցքերում, ինչպես նաև բաղանիքներում և այլ տեղերում): Ճանածի ձմեռելուց հետո, հետագայում, այսինքն գարնան ամիսներին, ամռան և աշնան ամիսների ընթացքում մեկ ճանածը տալիս ե բազմաթիվ սերունդներ, մեկ ճանածից ստացվում են միլիոնավոր ճանածեր: Ուրեմն ճանածերի դեմ պետք ե պայքարել նաև ձմեռվա ամիսներին: Ճանածերը ձմեռ ընալով զանազան շենքերում, սենյակներում, բաղանիքներում, պատերի անցքերի մեջ, ելեկտրական լարերի վրա և այլ տեղերում, գարնանն արթնանում են և սկսում աճել:

Անհրաժեշտ է ձմեռվա ամիսներին և գարնան սկզբին խնամքով հավաքել և վոչնչացնել (այրել) ձմեռող ճանածերին:

Ճանածերի դեմ պատքարելու գործը միանդաման արժանի յե մեր ուշադրությանը: Սանիտարական մարմինները, քաղիսորհուրդների և գյուղխորհուրդների սանիտարական սեկցիա-

ները, սանիտարական ակտիվն այս ուղղութեամբ մեծ անելիքներ ունեն: Ճանձերի դեմ պայքարելու գործը լավ հիմքերի վրա դնելու և նրա արդյունքներն ավելի եփեկտիվ դարձնելու նպատակով, անհրաժեշտ ե մանրամասնորեն մշակած հատուկ սանիտարական ծրագրով նախառեսել ճանձերի դեմ պայքարելու բոլոր միջոցառութերը՝ յենելով բնակելի վայրի կոնկրետ պայմաններից:

Պատ. Խմբագիր՝ Ա. Խ արման դարյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռ անյան
Սրբագրիչ՝ Հ. Մ անուկյան



Գլավվահի լիազոր՝ Ա - 4031 Հրատ. № 4625
Պատվեր 457, Տիբրաժ. 3000

Հանձնված ե արտադրության 9 մայիսի 1938 թ.
Ստորագրված ե տպադրության 26 հունիսի 1938 թ.

Գետիքատի Լ տպարան՝ Ցերեկան, Լենինի № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0270186

59

3369

ԳԻՒԾ 16 Կ.

(3011

2

օգոստա

Деңгент А. Б. АЛЕКСАНЯН

Мухи и борьба

против них

Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.